Հավելված N 3
ՀՀ կառավարության 2025 թվականի
_____-ի N _____-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՇՆՈՐՀՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՎԱՍՏՈՂ ԴԻՊԼՈՄՆԵՐԻՆ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՄԱՏԵՂ ԿԱՄ ԿՐԿՆԱԿԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ) ԵՎ ՀԱՎԵԼՎԱԾԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Գիտական աստիճանի դիպլոմը պետական փաստաթուղթ է, որը հավաստում է անձի գիտական աստիճանը, որը տրամադրվել է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի, սույն կարգի և օրենսդրության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային փաստաթղթերի համաձայն:

2. Դիպլոմին կից անձին տրամադրվում է նաև հավելված (ակադեմիական տեղեկանք), որում նշվում է տվյալ կրթական ծրագրի շրջանակներում անձի մասնակցած ակադեմիական մոդուլների և դասընթացների վերաբերյալ տեղեկատվությունը և դրանցից կուտակած կրեդիտները, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման գնահատականը:

3. Հավելվածում տրամադրվում է նաև տեղեկատվություն լրացուցիչ դասընթացների, կրթական ծրագրի հավատարմագրված կամ նախահավատարմագրված լինելու, կրթության ձևի, հրամանագրման ամսաթվի և գիտական ղեկավարի, ինչպես նաև դիպլոմը ստացող անձի մասին:

4. Համատեղ իրականացվող ծրագրերի պարագայում դիպլոմում նշվում է բուհի և մասնակից կազմակերպության (բուհ, գիտական կազմակերպություն, մասնավոր ընկերություն) անվանումները, իսկ ակադեմիական տեղեկանքում նկարագրվում է համագործակցության էությունը և յուրաքանչյուր մասնակցի դերակատարումը:

5. Գիտական աստիճանի դիպլոմը և ակադեմիական տեղեկանքը պետք է հասանելի լինեն Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգում (verify.e-gov.am):

6. Գիտական աստիճանը հավաստող դիպլոմը պետք է միարժեքորեն նույնականացվելի լինի անձի հետ՝ հանրային ծառայությունների համարանիշի միջոցով, կամ, օտարերկրա քաղաքացիների դեպքում՝ անձի քաղաքացիության երկրի կողմից տրամադրված նույնականացման փաստաթղթի միջոցով:

7. Գիտական աստիճանի և ակադեմիական տեղեկանքների բաշխման մատյանները

հասանելի են կրթության ոլորտում պետական լիազոր մարմնին, բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին և Կրթության տեսչական մարմնին՝ ամբողջությամբ, բուհին՝ իր մասով:

8. Մինչ սահմանված կարգով թվային դիպլոմների տրամադրումն անձի ստացած գիտական աստիճանի դիպլոմը կորցնելու դեպքում, անձը գրավոր դիմում է ներկայացնում Կոմիտե՝ կրկնօրինակ ստանալու համար: Դիմումի ստացումից 30 օրվա ընթացքում Կոմիտեն անվավեր է ճանաչում կորցրած դիպլոմը և հանձնում սահմանված ձևաչափով կրկնօրինակը՝ համապատասխան գրառմամբ:

9. Սույն կարգի ուժի մեջ մտնելուց առաջ տրամադրված գիտական աստիճանի դիպլոմները սահմանված ժամկետում թվայնացվելուց հետո՝ սույն կարգի 8-րդ մասի կարգավորումները չեն գործում, իսկ անձը կարող է ստանալ իր դիպլոմի թվային տարբերակի նույնականացման համարը՝ իր գրավոր դիմումի համաձայն: